ՀԱՍՄԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ ազգային ազատագրական պայքարի քաղաքական մաքառումների հիմնական, ավանդական խնդիրն էր՝ ազգային, անկախ պետության վերականգնումը, որը քաղաքակրթության զարգացման օրինաչափ, նաև անհրաժեշտ դրսևորում է յուրաքանչյուր ժողովրդի կյանքում: Հայաստանի տարանջատ, տրոհված երկրամասերի գոյությունը, միասնական ճակատով համաժողովրդական ազատագրական պայքարի կազմակերպման դժվարությամբ պայմանավորված՝ երկրի ռազմաքաղաքական պաշտպանության խնդիրը նախանշել է ազգային ազատագրական պայքարի ուղղվածությունն և նպատակը: Ազգային ինքնագիտակցության մեջ ազատագրության, ազգային պետություն ստեղծելու հույսը մշտապես կապվել է արտաքին միջամտության, քրիստոնյա պետությունների օգնության հետ: Տարբեր ժամանակներում Հայաստանի ազատագրական գաղափարախոսության առանցքը թեև եղել է Հայաստանի ազատագրման, քաղաքական ինքնորոշման նպատակը, սակայն տարբերեն եղել քաղաքական կողմնորոշման ուղիները:

Տարածաշրջանում ծավալապաշտական քաղաքական ընդարձակ ծրագրեր իրագործող տերությունների բախման հանգամանքներում, փոքր ժողովուրդների նման, հայ ժողովուրդը ևս դատապարտված է պաշտպանության նեցուկներ որոնել այս կամ այն հակամարտ տերությունների արանքում: Պատմական դժնդակ իրավիճակներում ելքի որոնման դրսևորումը հայ ազգային ազատագրական պայքարի պատմության մեջ հանգեցրել է քաղաքական տարբեր կողմնորոշումների ձևավորմանը: Հայաստանը, որ գտնվում էր «Արևելքի և Արևմուտքի ընդհարման գծին վրա», արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների թաքնված և բացահայտ, բայց տևական մենամարտի մեջ, քաղաքական պատմական վայրիվեր զարգացումներին հետամուտ, մշտական շփումների մեջ է եղել թե արևելյան և թե արևմտյան տերությունների հետ: Հայ ժողովրդի կողմնորոշման մեջ նախապատվությունը, նախընտրելի հեռանկարի տեսակետից, հանգում է քրիստոնյա արևմտյան քաղաքականությանը, թեև հայերը «... իրենց արեան կէսը ըլլալով ուրարտական... Արևելքի ժողովուրդ էին»,- գրում է Լևոն Շանթը:[1]

Ժողովրդի գիտակցության մեջ մշտապես տիրապետող է եղել այն մտայնությունը, թե սեփական ուժերով հնարավոր չէ ազատագրվել օտար տիրապետությունից և իր փրկությունը մշտապես կապել է որևէ քրիստոնյա պետության

օգնության հետ: Այդպես Ժողովրդի մեջ ծնունդ է առնում ազատագրական լեգենդ, որը Հայաստանի ազատագրության ծրագիրն էր և X դարից մինչև XVIII դար շատ տարածված էր հայ հասարակության վերնախավերի և հասարակ ժողովրդի մեջ: Տարբեր ժամանակներում ծնունդ առած լեգենդի բազմազան տարբերակների գլխավոր միտքն այն էր, որ Հայաստանը կվերականգնի իր անկախությունը քրիստոնյա հզոր պետությունների օգնությամբ: Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը մեջբերում է շվեդ արևելագետ Հենրիխ Բրենների կողմից լեգենդի տարբերակներից մեկի հիշատակումը, ըստ որի «Հին մի մարգարեության համաձայն, որը վերագրվում է Սահակ Պարթևին,...Պիտի հառնի եվրոպական մի թագավոր, վերականգնելու նրանց թագավորությունը, ազատի հայերին իրենց տառապանքներից և վերադարձնի նրանց իրենց վաղեմի բնակավայրը: Եվրոպական այդ թագավորին հայերը սպասում են հիմա այնպես, ինչպես հրեաները Մեսիային»:[2] Մինչև XVII դարի վերջ, ազգային ազատագրական պայքարի պատմության հիմնային ծրագրում նպատակ է դրվել որևէ արևմտաեվրոպական պետության օգնությամբ ազատագրվել և նույն այդ պետության հովանու ներքո ստեղծել ազգային հայկական թագավորություն: Հայ ժողովրդի,Վիկտոր Բերարի բնորոշմամբ «Եվրոպականացված ասիացիների մի համայնք»,[3] դեռ խաչակրած արշավանքներից առաջ, եվրոպական կողմնորոշման ակունքները սնվել են քաղաքական նշանակության հասնող քրիստոնեական դավանանքից և քաղաքակիրթ եվրոպական արժեքների նկատմամբ հայի դավանանքի հասնող հավատից: «...Հայաստանի մեջ քրիստոնեությունն մտցնելու հետևանքներից ամենագլխավորն այն էր, որ այնուհետև Հայաստանի կողմնորոշումը փոխվեց բոլորովին դեպի հակառակ կողմը՝ Արևմուտք»,- գրում է Լեոն:[4] Հայերի՝ արևմտաեվրոպական երկրներից ունեցած քաղաքական ակնկալությունները դատապարտվեցին անհաջողության: Եվրոպական պետությունները միմյանց հետ լինելով միջազգային դիվանագիտական սուր մրցակցության մեջ, ելնելով Մերձավոր Արևելքում իրենց քաղաքական, գաղութատիրական շահերից՝ հանդես էին գալիս որպես պարսկական և թուրքական բռնապետության դաշնակիցներ: «Մի ժողովուրդ՝ որ իր յորդ արիւնով իսկ, դեռ խաչակրաց արշաւանքների ժամանակից, փաստել է իր հզօր, բնազդային համակրութիւնը արևմտյան քաղաքակրթութեան համար.....բնաւ երբէք չվայելեց քաղաքակիրթ Եվրոպայի առատաբուխ պարգևները, բնավ երբէք չ՝արժանացաւ նրա կենդանի և իրական աջակցութեան, թէպէտ և շատ անգամ դիմեց նրան աղիողորմ՝ գանգատներով ու աղերսանքներով, թէպէտ և շատ անգամ տեղացին արևմտեան հրամանատարների դահլիճներից վարդագոյն խոստումներ ու ոգևորիչ խրախուսանք . . սկսած Իսրայէլ Օրիի առաքելութեան օրերից մինչև 1908 թւականը...»,- գրում է Միքայել

Վարանդայանը:[5] XVII դարի վերջից միջազգային քաղաքական իրադարձությունների ընթացքը փոխվեց: 1699 թվականի հունվարին Կարլովիցում հաշտության պայմանագրի կնքումից հետո Թուրքիայի և եվրոպական պետությունների միջև ստեղծվեց տևական խաղաղություն: Դեպի Մերձավոր Արևելք ձգտող կայսերական Ռուսաստանը միայնակ մնաց քաղաքական ասպարեզի վրա, որպես հակաթուրքական պայքարի հիմնական ուժ:

Հայաստանի ազատագրման հեռանկարների համար նոր հետևությունների նախադրյալներ դարձան միջազգային քաղաքականության մեջ կատարված փոփոխությունները: XVIII դարի սկզբին հայ ազգային ազատագրական պայքարի պատմության մեջ, քաղաքական, պատմական զարգացման գործընթացներով պայմանավորված, հիմնավորվում է ռուսական կողմնորոշումը: Ազատագրական պայքարի ջատագովներից Իսրայել Օրին առաջինն էր, որը, ինչպես գրում է պրոֆեսոր Զ.Տ. Գրիգորյանը - «18-րդ դարի սկզբին իր պաշտոնական բանակցություններով, ռուսական արքունիք ներկայացրած իր քաղաքական ծրագրով և պրակտիկ գործունեությամբ խորացրեց, ավելի հստակ ու կազմակերպված բնույթ տվեց և առաջ մղեց հայերի ռուսական կողմնորոշումը»:[6]

Հայ քաղաքական մտքի պատմության մեջ, 18-րդ դարի սկզբում Իսրայել Օրիի կատարած քաղաքական և դիվանագիտական շրջադարձը հիմնավորված էր միջազգային քաղաքականության մեջ կատարված փոփոխություններով: 1701 թվականին Պետրոս Առաջինին ուղղված իր լատինագիր նամակում, վկայակոչելով նախնիների մարգարեությունը, Իսրայել Օրին գրում է. - «... Մոսկովյան օգոստափառ տնից պիտի գա մի մեծ իշխան, ավելի քաջարի, քան Ալեքսանդր Մակեդոնացին,պիտի իր ձեռքը վերցնի Հայաստանի թագավորությունը և վերականգնի քրիստոնյանների ազատությունը... »:[7] Ըստ ազատագրական լեգենդի այս մտայնությամբ, որը XVIII դարից դառնում է ազատագրական պայքարի հավերժական ուղենիշը, փրկությունը պետք է գա Ռուսաստանից: Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու և նրա հովանու ներքո հայկական պետականության վերականգնման գաղափարը XVIII դարի սկզբից մշտապես դրվում է հայ ազգային ազատագրական պայքարի գագաթնակետում: Հայ մատենագրության մեջ, դեռ XV դարից սկսած, Մոսկովյան պետությունը հիշատակվում է «որպես մի պետություն, որը պետք է քրիստոնյա աշխարհի ուրիշ երկրների հետ ստանձնի նաև հայ ժողովրդի ազատագրության առաքելությունը»[8] Իսրայել Օրին լեգենդի մոսկովյան այս տարբերակին հաղորդեց քաղաքական լուրջ կշիռ և դարձրեց գաղափարաբանական կռվան հայ ազգային ազատագրական պայքարի ծրագրային բովանդակության մեջ քաղաքական նոր շրջադարձ հիմնավորելու համար: XVIII դարից սկսած Անդրկովկասում ռուսական կայսրության վարած աշխարհաքա-

ղաքականությունը դառնում է այն կարևոր գործոններից մեկը, որը պայմանավորում էր հայ ազգային-ազատագրական շարժման ծրագրային բովանդակությունը, ուղենշում խնդիրը և նպատակը, այն է Հայաստանի արևելյան հատվածի ազատագրությունը և պետականության վերականգնումը ռուսական կայսրության հովանու ներքո: Հայաստանի արևելյան հատվածը գտնվում էր ավատատիրական Պարսկաստանի տիրապետության տակ, որն ի տարբերություն քաղաքականապես և ռազմականապես համեմատաբար հզոր Թուրքիայի, հասարակական տնտեսական անկում էր ապրում: Արևելյան Հայաստանի,որը համարվում էր հայկական պետականության բնօրրան, ազատագրության առաջնահերթությունը պայմանավորում էր կայսերական Ռուսաստանի մերձավոր հարևանությունը և այն կարևոր հանգամանքը, որ Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և էջմիածնի Մայր տաճարը գտնվում էր Արևելյան Հայաստանում: «Արևելյան Հայաստանի ազատագրումը պետք է դառնար այն երաշխիքը, որի շնորհիվ կազատագրվեր Հայաստանն առհասարակ»,- գրում է պրոֆեսոր Վ.Ա.Դիլոյանը:[9]

Անդրկովկասի նվաճման հարցը կայսերական Ռուսաստանին զբաղեցնում էր դեռևս XVI դարից, երբ 1518 թվականին գերմանացի Մաքսիմիլիան Առաջին կայսրի դեսպան Ֆրանցիսկ դե Կոլան համոզում էր Վասիլ ցարին պատերազմել թուրքերի դեմ, նվաճելու Իբերիան, Կոլխիդան, Հայաստանը և Ղրիմը: Բայց միայն XVIII դարի երկրորդ կեսից սկսած մինչև XIX դարի վերջը, կայսերական Ռուսաստանը սկսում է վարել ակտիվ ծավալապաշտական քաղաքականություն, տարածքային նվաճումներ ձեռք բերելով Սիբիրում, Միջին Ասիայում, Լեհաստանում, Ֆինլանդիայում և Կովկասում: Ռուսաստանի աշխարհաքաղաքական, նվաճողական ծրագրերում անդրկովկասյան տարածքների գրավումը ձեռք է բերում քաղաքական, կենսական անհրաժեշտություն: Ռուսաստանը շարժվում է հարավ-արևելք և Պարսկաստանի տիրապետության տակ հեծող և իր ազգային ինքնությունը վտանգած հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ճշմարտացիությունը տվյալ պատմական շրջանում հիմնավորված և արդարացված էր: Քրիստոնյա հայության համար միակ հենարանը դառնում է Ռուսաստանը: «Հայ ժողովուրդը չուներ իր ճակատագրի այլընտրանքային լուծում և մահմեդական ծայրահեղականների շրջապատում իր գոյատևման հիմնահարցն այլապես լուծելու հնարավորություն, բացի նույնակրոն Ռուսաստանին միանալու հնարավորությունից»,- գրում է պրոֆեսոր Ա. Հ. Քյուրքչյանը:[10]

Կայսերական Ռուսաստանը, ելնելով իր իսկ պետության ռազմաքաղաքական շահերից, ձգտում էր ամրապնդվել Անդրկովկասում, որով էլ նպաստում էր հայ ժողովրդի ազգային - ազատագրական շարժումներին: «Ռուսական զենքի աջակցության հետ կապելով հայ ժողովրդի ազատագրության գործը հայ ազա-

տագրական շարժման գործիչներն ելնում էին նաև Անդրկովկասի Ռուսաստանին սահմանակից լինելու իրողությունից: Նրանք գտնում էին, որ այդ հանգամանքն ավելի դյուրին պիտի դարձներ ռուս-հայ ժողովուրդների տնտեսական, մշակութային և ռազմական կապերի բազմակողմանի կոնտակտների զարգացումը»,- գրում է պրոֆեսոր Ն.Բ.Սարուխանյանը:[11] Պատմական աղբյուրներում, սկսած XI դարից կան բազմաթիվ վկայություններ և փաստեր հայ-ռուսական տնտեսական, մշակութային կապերի մասին: Սակայն այս չփումները քաղաքական բովանդակություն չեն ունեցել, և այդ մասին վկայող փաստեր և պատմական նյութեր չկան: «1690-ական թթ. Յակոբ Ջուղայեցու մի դիմումից ռուս արքունիքին, կարող ենք միայն եզրակացնել, որ այդ ժամանակներում էջմիածինը թերևս հույս էր դնում ռուս դիվանագետների հայանպաստ միջնորդութիւնների վրա, սակայն դրանով ռուսներից դեռ զինվորական օգնութիւն չէր ակընկալում»:[12] Միայն XVIII դարի քսանական թվականներից հայ ազգային -ազատագրական շարժման քաղաքական ուղղվածությունը, որպես հետևանք Անդրկովկասում ռուսական կայսրության հետապնդած աշխարհաքաղաքական նպատակների, կողմնորոշվում է դեպի ռուսական կայսրություն, ակնկալելով Արևելյան Հայաստանի ազատագրությունը և ազգային պետականության վերականգնումը: Օգտվելով ռուսական զորքերի դեպի կասպիական ափերն առաջխաղացումից Սյունիքում և Արցախում սկսվում է ազգային ազատագրական զինված պայքար: «....Ռուսական օրիենտացիան,- գրում է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը,- խմորվեց 1720-ական թվականների շուրջը, երբ նեղուած պարսից դէմ ապստամբած ցեղերից,հայ կղերի և մելիքութեան մի խոշոր հատուած հարկադրված եղավ փարել ռուսների օգնութեանը և նրանցից փրկութիւն յուսալ»:[13] Միայն մեկ դար անց, երբ Հայաստանի արևելյան, պարսկահպատակ հատվածի ազատագրությունը հասունացել և քաղաքական իմաստով անխուսափելի էր, XVIII դարի քսանական թվականների Ղարաբաղի հայկական Սղնախների, Սյունիքի և ռուսական կայսրության միջև ռազմաքաղաքական համագործակցության հույսերն արդարացան: XIX դարի քսանական թվականները վճռորոշ նշանակություն ունեցան հայ ազգային ազատագրական շարժման պատմության մեջ, երբ 1828 թվականի փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրով, Արևելյան Հայաստանը միացվեց ռուսական կայսրությանը: Ռուսական կայսրության կազմում, Հայաստանի արևելյան հատվածը դարձավ հայության ազգահավաքման հաստատուն օջախ, լուծվեց հայկական ազգային ինքնության պահպանման խնդիրը: Ռուսական կայսրության սահմաններում, որի արտաքին քաղաքականությունը «տիրելու, տարածվելու, մեծացնելու պահանջն էր, նոր երկրներու յուրացումը, կլանումը, ռուսացումը...»,[14] «Հայկական թագա-

վորության» վերականգնման հույսերը մատնվեցին անհաջողության: Հայաստանի արևելյան հատվածը, Հայկական անկախ թագավորության վերականգնման փոխարեն, վերածվեց ռուսական կայսրության ծայրամասի: «Ցարական Ռուսաստանը սկսեց իրագործել Արևելյան Հայաստանի ազատագրումն Իրանի և Թուրքիայի լծից, թողնելով, որ «Հայաստանի թագավորության» վերականգնման գաղափարը մնա սոսկ հայ ազատասերների բարեպաշտ բաղձանք»,- գրում է Աշոտ Հովհաննիսյանը[15]: Մինչդեռ հայ ազատագրական պայքարի ծրագրային հենքում Հայաստանի ազատագրությունը, հայ ժողովրդի հետագա գոյությունը կարևորվել և նույնացվել է կենսական նշանակության հասնող ազգային պետության ստեղծման հետ: «...Ազգովին ապրելու հնարավորություն ունենալու համար հայ ժողովուրդին անհրաժեշտ է պետական անկախություն:... Անկախությունը հայուն համար կյանքի դրած բացարձակ պահանջն է և անկախության ձգտումը մեր գոյության հիմքը, մեր լինել-չլինելու հարցը»,-գրում է Լևոն Շանթը:[16]

Աշխարհաքաղաքական զարգացումների դինամիկան, որի, «Օրվան քաղաքականությունը կառաջնորդվի օրվան իրականութեենն»,[17] տրամաբանությունը չի ենթադրում հավերժական բարեկամներ կամ թշնամիներ, չի կարող չվերանայել պատմական տարբեր ժամանակներում ձևավորված քաղաքական կողմնորոշումները:

Գրականություն

1. Լևոն Շանթ, Մեր անկախութիւնը, Պոսթոն,1925 , էջ 111:
2. Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության: Գիրք երկրորդ, Երևան 1959 թվական, էջ 315:
3. Միք. Վարանդյան, Հայկական շարժման նախապատմութիւն, Ժնև,1912, հ.1,էջ 119:
4. Լեո, Հայոց պատմության նոր շրջան, Երևան, 1926, էջ 45:
5. Միքայել Վարանդյան,Հայկական շարժման նախապատմութիւն, Ժնև,1912, հ.1,էջ 120:
6. Զ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Ե.,1960, էջ 91:
7. Г.А.Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПБ, 1898: е»» .
8. Армяно- русские отношения в первой трети 18 в. Сб. док., т.2 ,ч. 1. Е., 1964, ст. XIV-XV.
9. Վ.Ա.Դիլոյան, Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան 1989, էջ 324:
10. Ա. Հ. Քյուրքչյան, 1826-1828 ռուս-պարսկական պատերազմը, Երևան,2000, էջ149:
11. Ն.Բ.Սարուխանյան, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական Հայ պատմագրության մեջ: Երևան, 1971. էջ 44:
12. Ա. Հովհաննիսյան, Հայ-Ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, էջմիածին 1921, էջ 53:
13. Ա. Հովհաննիսյան, Հայ-Ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, էջմիածին 1921, էջ 63:
14. Լևոն Շանթ, Անկախությունը պահանջ ազգային գոյության, Եր.,1991, էջ 59:
15. Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք երկրորդ. Երևան, 1959, էջ 502:
16. Լևոն Շանթ, Անկախությունը պահանջ ազգային գոյության,Եր.,1991,էջ 119:
17. Լևոն Շանթ, Անկախությունը պահանջ ազգային գոյության,Եր.,1991,էջ 116: